

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք. Երևան

18 հոկտեմբերի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Գիտահետազոտական կենտրոնի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:
- Ֆարմացիայի ինստիտուտի մագ
- խտրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:
- Ֆարմացիայի ինստիտուտում 01.10.2021թ.-01.10.2024թ. ժամանակահատվածում թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտահետազոտական աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունների քննարկում և հաստատում:
- Ընթացիկ հարցեր:
 - Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը հարցը:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

- ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Գիտահետազոտական կենտրոնի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը: Օրակարգի առաջին հարցը վերաբերում է Ֆարմացիայի

ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացմանը:

Ելույթ ունեցալ՝ գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով նշեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի թափուր պաշտոնի համար դիմել են Հայարփի Մանթաշի Սիմոնյանը և Գագիկ Սուրենի Մելիքյանը, ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի համար դիմել է Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանը, գիտական խմբի ղեկավարի թափուր պաշտոնի համար դիմել են Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանը և Աննա Ֆելիքսի Մկրտչյանը, իսկ գիտական ստորաբաժանման ղեկավարի թափուր պաշտոնի համար՝ Աշոտ Սերոբի Սաղյանը:

Ա. Դադայանը հաջորդաբար ներկայացրեց վերը նշված թափուր պաշտոնների հավակնորդների անձնական գործերը.

1.1. Գիտաշխատողի պաշտոնի հավակնորդ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Հայարփի Մանթաշի Սիմոնյանը 2001-2006թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի «Էկոլոգիական քիմիա» բաժինը: 2008-2013թթ. հանդիսացել է Երևանի պետական համալսարանի հայցորդ, 2014թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2006-2017թթ. Աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնում՝ նախ որպես կրտսեր գիտաշխատող, ապա որպես ավագ լաբորանտ: 2012 թ. սկսել է դասավանդել նույն ամբիոնում՝ նորպես դասախոս, իսկ 2014-2017 թթ.՝ որպես ասիստենտ: 2017 թվականից մինչ օրս հանդիսանում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոլիայի ամբիոնի վարիչը:

Հ. Սիմոնյանը հեղինակ է 25 գիտական հոդվածների, 29 գիտաժողովների զեկուցման թեզիսների և և 2 ուումնամեթոդական աշխատանքի: Վերջին 5 տարում հրատարակել է 6 գիտական հոդված, որոնցից 5-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում:

1.2. Գիտաշխատողի մյուս թափուր պաշտոնի հավակնորդ ք.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Սուրենի Մելիքյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին

բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Գազիկ Սուրենի Մելիքյանը 1962-1967 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը: 1972թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1984 թ. ստացել է դոցենտի կոչում, 1993թ. քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1995 թ. պրոֆեսորի կոչում: Գազիկ Մելիքյանը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և գիտաժողովների զեկուցման թեզիսների: Վերջին 5 տարում հրատարակել է 6 գիտական հոդված, որոնցից 4-ը բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում:

1.3. Ավագ գիտաշխատողի պաշտոնի հավակնորդ ք.գ.թ., դոցենտ Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Ա. Ծատուրյանը 2001-2006 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիա բաժինը՝ ստանալով դեղագետ, քիմիկոս պրովիզոր որակավորումը, այնուհետև այնուհետև աշխատանքի է անցել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Կենսատեխնոլոգիայի» ԳՀԻ (ներկայումս՝ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ) Ֆիզիկաքիմիական անալիզի լաբորատորիայում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 2013-2018 թթ.-ից հանդիսանում է ԿԱՄ-ի մաքրման և սերտիֆիկացման լաբորատորիայի վարիչ, իսկ 2021թ.-ից մինչ օրս՝ նույն կենտրոնի տնօրեն: 2013 թ.-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.ից համատեղությամբ աշխատում է ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնում նախ որպես ասիստենտ, իսկ 2022թ. մինչ օրս դոցենտ: Ղեկավարել և մասնակցել է ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային դրամաշնորհների կատարմանը:

1.4. Գիտական խմբի ղեկավարի պաշտոնի հավակնորդ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Ա. Հովհաննիսյանը 1981-1986 թթ. սովորել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի «կենսաքիմիա» բաժինը: 2010 թ. ՀՀ Էկոնոմիկայի

նախարարության «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ –ում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2010-2013 թթ. հանդիսացել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆարմաքիմիայի ամբիոնի ասիստենտ, 2013-2015 թթ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆարմաքիմիայի ամբիոնի դոցենտ, 2015թ. մինչ օրս ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ: Ա. Հովհաննիսյանը հեղինակ է ավելի քան 40 գիտական հոդվածների, 2 ուսումնական ձեռնարկ, 2 ուումնամեթոդական աշխատանք և 12 գիտաժողովների զեկուցման թեզիսների: Վերջին 5 տարում հրատարակել է 12 գիտական հոդված, որոնցից 3-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Ղեկավարել և մասնակցել է ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային դրամաշնորհների կատարմանը:

1.5. Գիտական խմբի ղեկավարի պաշտոնի հավակնորդ ք.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Մկրտչյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին: Ա. Մկրտչյանը 2003-2008 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժինը: 2008-2011թթ. հանդիսացել է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի առկա ասպիրանտ, իսկ 22.10.2012թ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2012 թ.-ին աշխատանքի է անցել քիմիայի ֆակուլտետի «Դեղագործական քիմիայի» ամբիոնի «Հետերոցիկլիկ ամինաթթուների սինթեզի» բազային լաբորատորիայում՝ որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 2014թ. մարտ ամսից՝ որպես գիտաշխատող: 2014–մինչ օրս հանդիսանում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ «Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի (նախկինում դեղագիտության ամբիոնի) դոցենտ, ինչպես նաև 2017-2023թթ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրեն, իսկ 2023թ մինչ օրս՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն: Ա. Մկրտչյանը 2014-2022թթ. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի գիտաշխատող, 2022թ.- մինչ օրս՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի ղեկավար: Ա. Մկրտչյանը հեղինակ է 30 գիտական հոդվածների և 2 ուսումնամեթոդական աշխատանքի: Վերջին 5

տարում հրատարակել է 13 գիտական հոդված՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Ղեկավարել և մասնակցել է ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային դրամաշնորհների կատարմանը:

1.6. Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի հավակնորդ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Սերոբի Սադյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են նշված պաշտոնի համար հայտարարված մրցույթի պահանջներին:

Ա. Սադյանը 1973-1978 թթ. Սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1985թ. ԽՍՀՄ ԳԱ Ա.Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1996թ.-ին ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական թեզը՝ քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2006թ.-ից հանդիսացել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 2010 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ներկայումս ՀՀ ԳԱԱ ակադեմիայի նախագահն է: Հեղինակ է՝ 350 գիտական հոդվածների, զգալի մասը հղման գործակցով ամսագրերում, 2 մենագրությունների տպագրված և 2 դասագրքերի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 19 թեկնածուական և 3 դոկտորական թեզեր:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ ք.գ.թ. Ս. Ափոյան,

անդամներ՝ ք.գ.թ. Ս. Պետրոսյան

դ.գ.թ. Լ. Սահակյան:

Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 20 անդամներից 14-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 14 անդամներ:

Հայարփի Մանթաշի Սիմոնյանի գիտաշխատողի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Գագիկ Սուրենի Մելիքյանի գիտաշխատողի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի ավագ գիտաշխատողի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանի գիտական խմբի ղեկավարի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Աննա Ֆելիքսի Մկրտչյանի գիտական խմբի ղեկավարի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Աշոտ Սերոբի Սաղյանի գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրվելուն կողմ էր քվեարկել 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Որոշեցին՝ Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և.

1.1. Հայարփի Մանթաշի Սիմոնյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի պաշտոնում:

1.2. Գագիկ Սուրենի Մելիքյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատողի պաշտոնում:

1.3. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատողի պաշտոնում:

1.4. Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտական խմբի ղեկավարի պաշտոնում:

1.5. Աննա Ֆելիքսի Մկրտչյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտական խմբի ղեկավարի պաշտոնում:

1.6. Աշոտ Սերոբի Սաղյանին համարել ընտրված Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

2. Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրոսական թեզերը վերահսկող հանձնաժողովի նախագահ, Կենսաբժշկագիտության ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ա.Վ. Գեոլչանյանը, ով հաղորդեց, որ ինստիտուտի ամբիոններում կայացած նիստերում քննարկվել և գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների անվանացանկը:

Ելույթ ունեցան՝ Ֆարմաբիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Խաչիկ Հակոբյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Անահիտ Հովհաննիսյանը, ովքեր առաջարկեցին հաստատել «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

3. Ֆարմացիայի ինստիտուտում 01.10.2021թ. - 01.10.2024թ. ժամանակահատվածում թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտահետազոտական աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունների քննարկում և հաստատում:

Լսեցին՝

3.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանի ղեկավարած 21T-1D057 ծածկագրով «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը: Հաշվետվությունը ներառում է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ստացված արդյունքները: Հ. Սիմոնյանը տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հետազոտվել են նիկելի դեհիդրոամինաթթվային կոմպլեքսներին հետերոցիկլիկ և արոմատիկ օղակներ պարունակող նուկլեոֆիլների միացման ռեակցիաները, ինչի արդյունքում սինթեզվել են էնանտիոմերապես հարստացված նոր ոչ սպիտակուցային α -ամինաթթուներ, ինչպես նաև այդ ամինաթթուների հիմքի

վրա դիպեպտիդներ: Մինթեզված միացությունները փոխանցվել են Իտալիայի Նեապոլի «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտի կենսաբանական սկրինինգի լաբորատորիա՝ կենսաբանական հատկությունների ուսումնասիրության համար: Իրականացվել են ՈԻՄ և ՇԴ սպեկտրոսկոպիական հետազոտություններ, մոլեկուլային դոկինգ, բջջային հետազոտություններ, ինչի արդյունքում երեք ամինոթթուների համար գրանցվել են դրական արդյունքներ: Հետազոտության արդյունքները մի մասը տպագրվել է Q1 կատեգորիայի ամսագրում, իսկ մյուս մասը ձևակերպվել է և շուտով կներկայացվի ևս բարձր կատեգորիայի ամսագրում տպագրման: Իրականացված հետազոտությունների արդյունքները թեմայի ղեկավարի կողմից բանավոր-պլենար զեկույցով ներկայացվել են նաև Լեհաստանի Օպոլեյի համալսարանի բժշկագիտության ինստիտուտի կողմից սույն թվականի ապրիլի 17-19 կազմակերպած «Modern Research Trends in Biomedical Sciences: a holistic approach to health care (MRTBS 2024)» միջազգային գիտաժողովում: Հաշվետու ժամանակահատվածի չորրորդ եռամսյակում թեմայի գիտական ղեկավարը և կատարող Սաթենիկ Պետրոսյանը գիտական խորհրդատուի հրավերով գործուղվել են Իտալիայի Նեապոլ քաղաքի «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտ, որտեղ սեմինար քննարկումների ընթացքում ամփոփվել են կատարված աշխատանքները և իրականացվել են նախագծի շրջանակներում սինթեզված ամինոթթուների նմուշների ՈԻՄ և ՇԴ սպեկտրոսկոպիական հետազոտություններ:

3.2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի ղեկավարած «Ֆտորի քանակի որոշում ՀՀ կենցաղային ջրերում և համեմատական վերլուծություն» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը: Հաշվետվությունը ներառում է ՀՀ ԿԳՄՄԼ գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» պայմանագրային ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները: Ա. Ծատուրյանը տեղեկացրեց, որ ծրագրի շրջանակներում իրականացվել է ֆտորի քանակական և որակական որոշման նոր, արդյունավետ և բարձր ընտրողականություն ունեցող մեթոդի մշակում իոնային քրոմատոգրաման եղանակով և մշակված մեթոդի վալիդացում՝ համաձայն վերլուծական մեթոդների նկատմամբ գործող միջազգային

պահանջների: Վալիդացված մեթոդը կիրառվել է Հայաստանի տարբեր աշխարհագրական գոտիներից նմուշառված խմելու ջրի նմուշների անիոնային կազմի վերլուծության համար: Նախատեսվում է մշակված մեթոդը ներկայացնել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի որակի վերահսկման լաբորատորիա աուդիտի գնահատմանը՝ ISO/IEC 17025 հավատարմագրման ստանդարտներին թեստավորման համապատասխանությունը հաստատելու համար:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել.

3.1. Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացված «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը:

3.4. Ա. Ծատուրյանի ղեկավարությամբ իրականացված «Ֆտորի քանակի որոշում ՀՀ կենցաղային ջրերում և համեմատական վերլուծություն» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը:

4. Ընթացիկ հարցեր:

4.1. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը հարցը:

Լսեցին՝ գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանին, ով ներկաներին հաղորդեց, որ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի հրավիրյալ անդամ Ալբերտ Եփրեմի Սահակյանը 2024/2025 ուսումնական տարվանից սկսած հանդիսանում է Ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հիմնական աշխատակից: Միաժամանակ տեղեկացրեց նաև, որ ուսումնառությունն ավարտելու, ինչպես նաև անձնական պատճառներով, սեփական դիմումների համաձայն ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմից դուրս են եկել ուսանող անդամներ Անուշ Գալուստի Քարամյանը, Անի Սամսոնի Մաթևոսյանը և Նոյեմի Արթուրի Սաֆարյանը: Նրանց փոխարեն Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհուրդն առաջադրել է «Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներ Իրինա Էմիլի Պետրոսյանի, Մանե Ալիկի Խաչատրյանի և 2-րդ կուրսի ուսանող Մերի Բաբկենի Ղազարյանի թեկնածությունները:

Գիտական խորհրդի կազմում Ալբերտ Եփրեմի Սահակյանի հրավիրյալ անդամի կարգավիճակը ընտրովի անդամի կարգավիճակով փոխարինելու և ուսանողներ Իրինա Էմիլի Պետրոսյանին, Մանե Ալիկի Խաչատրյանին, Մերի Բաբկենի Ղազարյանին Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմում ուսանող անդամի կարգավիճակով ընդգրկելու համար անհրաժեշտ է Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությունը՝ ԵՊՀ ռեկտոր հաստատմանը ներկայացնելու համար:

Որոշեցին՝ (միաձայն) ԵՊՀ ռեկտորի հաստատմանը ներկայացնել Ալբերտ Եփրեմի Սահակյանին՝ հրավիրյալ անդամի կարգավիճակը ընտրովի անդամի կարգավիճակով փոխարինելու համար և ուսանողներ Իրինա Էմիլի Պետրոսյանի, Մանե Ալիկի Խաչատրյանի, Մերի Բաբկենի Ղազարյանի թեկնածությունները՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմում ուսանող անդամի կարգավիճակով ընդգրկելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ. դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան